ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1384 01.11.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ
գեներալ-լեյտանենտ
պարոն. Վ.Գասպարյանին

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ՄՏԻՑ № 4665
04 11 13թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հոկտմբեր ամսին Դիտորդական խումբը այցելության կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Ճամբարակի ՁՊՎ արձանագրել է.

Թերություններ.

1. Առաջին խցի բարձի երեսը գտնվում է կեղտոտ վիճակում */փաստը հաստատող լուսանկար – 1/*
2. Մոնիթորինգի ժամանակ Դիտորդական խումբը արձանագրեց, որ քննչական և տեսակցության սենյակները համատեղված էին և գտնվում էին փակ վիճակում, տվյալ պահին անհրաժեշտություն լինելու դեպքում չէին կարող օգտագործել:
3. ՁՊՎ-ում օգտագործվող սպասքը գտնվում էր անմխիթար, փոշոտ, կեղտոտ վիճակում */փաստը հաստատող լուսանկարներ – 2,3/*
4. Բուժսենյակը համատեղված էր հերթապահ ոստիկանի հանգստի սենյակի հետ և բուժսենյակում բացակայում էր բժշկական սավանը, միայն առկա էր բարձի երես: */փաստը հաստատող լուսանկարներ – 4,5/*
5. Դեղարկղը ուսումնասիրելուց արձանագրվեց, որ անտեսվել է համապատասխան որոշումը, իր հանձնարարականով և առկա էր տարբեր տեսակի դեղորայք և որոշ դեղորայքի պիտանելիության ժամկետի մասը կտրված էր: */փաստը հաստատող լուսանկար – 6/*

«Ոստիկանության Հանրապետություն
Մուտք թիվ 2397
04 11 2013թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Խախտումներ.

1. ՀՊՎ-ում պահվող անձին համապատասխան վայր տեղափոխելուց լրացվում է պահանջագիր կանչի վայր տեղափոխելու համար, որտեղ տեղափոխման ամիս ամսաթվերը չեն նշվում */փաստը հաստատող լուսանկարներ – 7, 8/*
2. Չի պահպանվում ՀՀ ոստիկանության կողմից հրահանգավորված <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի պահանջը: Դիտորդական խմբի ներկայացրեցին միայն մեկ տեղեկանք, որում. առաջինը չկար իրազեկման հեռախոսահամարը, իսկ երկրորդ՝ ինչ որ անհասկանալի բաներ էր նշված տեղեկանքի մեջ: */փաստը հաստատող լուսանկարներ – 16/*
3. ՀՊՎ-ում առկա էր տեսակցությունների վերաբերյալ 4 դիմում, որից միայն մեկն էր գրանցված <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերման>> գրանցամատյանում, մնացած երեքի վերաբերյալ բացակայում էին գրառումները: */փաստը հաստատող լուսանկարներ – 9,10,11,12,13,14,15/*
4. Դիտորդական խմբին վարչակազմի կողմից չտրամադրվեց ՀՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու վերաբերյալ պայմանագիրը:
5. Վարազդատ Եղիշի Հայրապետյանը ոստիկանության Ճամբարակի բաժին բերման է ենթարկվել 12.09.2013թ-ին ժամը 12^{50}-ին: Անձնական զննությունը կատարվել է հակառակ սեռի ներկայացուցիչի ներկայությամբ: Միաժամանակ փաստենք, որ զննության ենթարկելու ժամը բացակայում է արձանմագրության մեջ:

   Վ. Հայրապեյանը ձերբակալվել է նույն օրը ժամը 21^{30}, բերման ենթարկելուց հետո մոտ 8 ժամ 40 րոպե անց: 14.09.2013թ-ին Վ. Հայրապետյանը վարույթն իրականցնող մարմնի միջնորդությամբ տեղափոխվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ խափանման միջոց կիրառելու համար, որից հետո անձը ազատ է արձակվել: ՀՊՎ-ի վարչակազմի համար ազատ արձակման հիմք է հանդիսացել դատարանի որոշումը: Նշված որոշումը բավարար հիմք չէր Վ. Հայրապետյանին ազատ արձակելու համար, քանի որ դատավորի կողմից միջնորդությունը մերժվել է և միաժամանակ որոշվել է Վ. Հայրապետյանին անհապաղ ազատ արձակել և որոշման կատարումը հանձնարարել՝միջնորդություն ներկայացրած անձին: Տվյալ դեպքում բացակայում է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Գեղարքունիքի մարզի քննչական բաժնի Սևանի քննչական բաժանմունքի քննիչ Դ. Շահբազյանի որոշումը Վ. Հայրապետյանին ազատ արձակելու վերաբերյալ: */փաստը հաստատող լուսանկարներ – 17,18,19,20 /*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք Դիտորդական խմբի հրատապ հաշվետվություններին տալ առանձին մեկնաբանություններ՝ չընդհանրացնելով մարզի մնացած ՀՊՎ-ներում առկա հիմնախնդիրների հետ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1- 3392 «29» 11 2013թ.

Ձեր՝ 01.11.2013թ. թիվ 2621/1384 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Ճամբարակի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցի ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր վարչությունում, իսկ Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

Ոստիկանության Ճամբարակի բաժնի վարչական շենքը կառուցվել է դեռևս խորհրդային տարիներին, ուստի ելնելով շենքային պայմաններից՝ ՁՊՎ-ի քննչական և տեսակցության սենյակները համատեղված են, այն գտնվում է փակ վիճակում և բացվում է միայն անհրաժեշտության դեպքում՝ հերթապահ մասի պետի կամ ՁՊՎ ոստիկանի կողմից:

ՁՊՎ-ի բուժսենյակը և ոստիկանի հանգստի սենյակը նույնպես համատեղված են, որտեղ բժշկական սավանն ու բարձի երեսը հիգիենայի պահպանման նպատակով պահվում են պոլիէթիլենային տոպրակի մեջ, որն օգտագործվում է միայն անհրաժեշտության դեպքում, իսկ դիտորդների խմբի այցելության ժամանակ օգտագործված բարձի երեսը պատկանել է ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանին:

Ներկայացված խախտումների վերաբերյալ հայտնվում է.

1. <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի

ներքին կանոնակարգ>>-ի 16-րդ գլխի /քննչական գործողություններին ձերբակալվածների մասնակցությունն ապահովելը/ համաձայն, ՁՊՎ վարչակազմը պարտավոր է քննիչի ցուցումով ապահովել ՁՊՎ-ում պահվող անձանց մասնակցությունը քննչական գործողություններին, որի վերաբերյալ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ: Հարկ է նշել նաև, որ քննչական գործողություն կատարելու նպատակով անձանց ՁՊՎ-ի խցերից դուրս բերելու համար գրավոր <<պահանջագիր կանչ>> ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ կամ որևէ իրավական ակտով նախատեսված չէ:

2. 15.05.2013թ. ոստիկանության Ճամբարակի բաժնի ՁՊՎ է ընդունվել կալանավոր Ա.Նիկողոսյանը, որի ցանկությամբ տվյալ օրվա հերթապահ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ի.Հակոբյանը հեռախոսակապի միջոցով նրա գտնվելու վայրի և տեղափոխման մասին տեղեկացրել է վերջինիս եղբորը, որի վերաբերյալ կազմել է տեղեկանք: Ոստիկանության ծառայողը տեղեկանքում հեռախոսահամարը չի նշել, քանի որ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 2-րդ գլխի 11-րդ կետով այն չի պահանջվում:

3. Տեսակցությունների վերաբերյալ ստացվել են 4 դիմումներ, որոնցից միայն մեկն է գրանցվել <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում, քանի որ մյուս երեք դիմումներով կալանավորները հրաժարվել են տեսակցությունից, որի վերաբերյալ կազմվել են համապատասխան տեղեկանքներ և ձերբակալվածները իրենց ստորագրություններով հաստատել են այն:

4. Դիտորդական խմբին չի տրամադրվել ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու վերաբերյալ պայմանագիրը, քանի որ այն իրենից ներկայացնելով ֆինանսական փաստաթուղթ՝ գտնվել է բաժնի ֆինանսական մասում, իսկ այցելության օրը՝ հոկտեմբերի 27-ը, եղել է ոչ աշխատանքային /կիրակի/ օր:

5. Վարազդատ Եղիշի Հայրապետյանը 12.09.2013թ. ժամը 12.50-ին բերման է ենթարկվել ոստիկանության Ճամբարակի բաժին և ժամը 14.45-ին բաց է թողնվել, որի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվել <<Ոստիկանության մարմին բերման ենթարկվածների հաշվառման>> գրքում: Նույն օրը, Վ.Հայրապետյանը հրավիրվել է ոստիկանության Ճամբարակի բաժին և ժամը 21.30-ին ձերբակալվել է:

14.09.2013թ. Վ.Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 268 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և նույն օրը վերջինիս նկատմամբ կալանավորումն որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է:

14.09.2013թ. քննիչի կողմից որոշում է կայացվել Վ.Հայրապետյանին արգելանքից ազատելու մասին, որը տրամադրվել է ոստիկանության Ճամբարակի բաժնի հերթապահ մասի պետ Ա.Ղուկասյանին, սակայն վերջինիս անփութության արդյունքում քննիչի որոշումը թյուրիմացաբար դրվել է այլ թղթապանակի մեջ, իսկ դատավորի որոշումը՝ Վ.Հայրապետյանի անձնական գործում:

Միաժամանակ հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից որպես թերություն արձանագրված 1-ին խցի բարձի երեսը և սպասքը կեղտոտ վիճակում լինելու, դեղարկղը

սահմանված ցանկով համալրված չլինելու, դեղորայքի պիտանելիության ժամկետները հավաստիացնող հատվածը կտրված լինելու, ինչպես նաև որպես խախտում արձանագրած ՁՊՎ ընդունվող անձին հակառակ սեռի ներկայացուցչի ներկայությամբ խուզարկության ենթարկելու հանգամանքները՝ կատարված ծառայողական քննության արդյունքներով հիմնավորվել են, որի համար ոստիկանության Ճամբարակի բաժնի հերթապահ մասի պետ Ա.Ղուկասյանը ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ հերթապահ մասի ավագ տեսուչ հերթապահ Ի.Հակոբյանը՝ նախազգուշացվել է:

ՀՀ ոստիկանության շտաբ